Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարչության պետի

2015թ. մայիսի 19-ի

N 112-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՎԱԾ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐԻ, ՎԵՐԳԵՏՆՅԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի սերտիֆիկացված աերոդրոմների, վերգետնյա միջոցների և ծառայությունների պետական և մասնագիտական վերահսկողության, ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների (այսուհետ՝ Աուդիտ) ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է <<Ավիացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ և 11-րդ մասերի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԻԿԱՕ) 9774 ձեռնարկի (Doc.9774) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչության) պետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 68-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմների սերտիֆիկացման կարգի>> (այսուհետ՝ Կարգ) դրույթների համաձայն:

2. Ուղեցույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի սերտիֆիկացված աերոդրոմների, վերգետնյա միջոցների և ծառայությունների Աուդիտի իրականացման գործընթացը:

3. Ուղեցույցի իմաստով՝

1) Միջազգային և ներքին քաղաքացիական ավիացիայի սերտիֆիկացված աերոդրոմ (այսուհետ՝ Աերոդրոմ) է համարվում այն աերոդրոմը, որը Կարգի համաձայն ստացել է աերոդրոմի սերտիֆիկատ:

2) Վերգետնյա միջոցներ են (այսուհետ՝ Միջոցներ) համարվում՝

ա. աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների աերոնավիգացիոն սպասարկման համար նախատեսված տեսողական համակարգերը և սարքավորումները, ներառյալ դրանց էներգամատակարարումը.

բ. աերոդրոմի շահագործողական վիճակի պահպանման, օդանավերի սպասարկման և թռիչքների վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության ապահովման նպատակով օգտագործվող միջոցները,

3) Ծառայություններ են համարվում աերոդրոմի շահագործումը, օդանավերի վերգետնյա (ներառյալ հրշեջ և փրկարարական) սպասարկումն ապահովող ծառայությունները կամ կազմակերպությունները (այսուհետ՝ Ծառայություն):

4) Նշանակալի փոփոխություններ են համարվում այն փոփոխությունները, որոնց անվտանգության գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ դրանք կարող են հանգեցնել ավիացիոն պատահարների կամ լուրջ միջադեպերի: Մնացած փոփոխությունները համարվում են ոչ նշանակալի:

4. Ուղեցույցի նպատակն է Աուդիտի միջոցով վերահսկելու Աերոդրոմի համապատասխանությունը սերտիֆիկատի պահանջներին և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով և միջազգային կազմակերպությունների (ICAO, EASA, ՄԱԿ) կողմից սահմանված չափանիշերին և ստանդարտներին, ինչպես նաև Գլխավոր վարչության պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 246-Ն հրամանով հաստատված <<Քաղաքացիական ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովվության ու անվտանգության կանոնակարգի>> և 2007 թվականի ապրիլի 23-ի թիվ 64-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմանների>> դրույթների կիրառումը:

ԳԼՈՒԽ I I
ԱՈՒԴԻՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Ըստ բնույթի Աուդիտը կարող է լինել տարեկան, սեզոնային և օպերատիվ:

6. Տարեկան Աուդիտն իրականացվում է Ուղեցույցի 4-րդ կետով սահմանված գործառույթներն ուսումնասիրելու նպատակով:

7. Սեզոնային Աուդիտն իրականացվում է Աերոդրոմի, Միջոցների և Ծառայությունների պատրաստականությունը ձմեռային ժամանակաշրջանին ուսումնասիրելու նպատակով:

8. Օպերատիվ Աուդիտն իրականացվում է՝

1) Օդանավերի անձնակազմերի և/կամ/ օդային երթևեկության կառավարման ծառայությունների կողմից արձանագրված թռիչքների անվտանգությանը սպառնացող թերությունների առկայության դեպքում:

2) Գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 23-ի թիվ 64-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմանների>> 92-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ամսեկան հաշվետվություններում ներկայացված իրադարձությունների առկայության դեպքում:

3) Անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում (առատ տեղումներ, մառախուղ, օդի ջերմաստիճանի զգալի նվազում, ուժեղ քամի և այլն):

4) Աերոդրոմի տարրերի (վազքուղի, ղեկուղի, կառամատույց, անվտանգության գոտիներ) կամ Ուղեցույցի 3-րդ կետի 2-րդ ենթակետի <<ա>> պարբերությունում նշված Միջոցների նշանակալի և ոչ նշանակալի փոփոխությունների, ինչպես նաև վերանորոգման աշխատանքների ընթացքում:

5) Գլխավոր վարչության պետի բանավոր կամ գրավոր հանձնարարականով:

9. Ի լրումն սույն գլխում ներկայացված Աուդիտների, Գլխավոր վարչության աշխատակազմի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության աշխատակիցների կողմից տարվա ընթացքում կատարվում են Աերոդրոմի, Միջոցների և Ծառայությունների մոնիտորիգ՝ ուղղված թռիչքների անվտանգության ապահովման ուսումնասիրմանը:

ԳԼՈՒԽ I I I
ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

10. Աուդիտն իրականացվում է Գլխավոր վարչության աշխատակազմի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության աշխատակիցներից ստեղծված աշխատանքային խմբի (այսուհետ՝ Խումբ) կողմից, որը կազմվում է Խմբի ղեկավարից և անդամներից և հաստատվում է Ուղեցույցի 10-րդ կետում նշված հրամանով: Աշխատանքային խմբի առնվազն մեկ անդամ պետք է անցած լինի Կազմակերպությունների վերահսկողություն իրականացնելու համար դասընթացներ, ունենա հավաստագիր (սերտիֆիկատ) և անցնի վերապատրաստման դասընթացներ երեք տարին մեկ անգամ:

1) Խմբի ղեկավարի առաջարկությամբ Խմբի կազմում կարող են ընդգրկվել Գլխավոր վարչության աշխատակազմի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ կամ հրավիրված մասնագետներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի և ՀՀ ՔԱԿ-ի կողմից սահմանված աշխատանքի ընդունման ձեռնարկի. տեսուչների ներգրավման նպատակով ավիացիոն ոլորտի ներկայացուցիչների հետ ստորագրելով փոխըմբռնման հուշագիր կամ նման այլ պայմանավորվածություն: Խմբի կազմը սահմանելիս պետք է բացառվի շահերի բախումը՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի:

2) Աուդիտն իրականացվում է NN1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 և 11 ձևերով սահմանված հարցաթերթիկներով, որոնք մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, <<Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին>> կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա), Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության և Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության (EASA) փաստաթղթերով սահմանված չափանիշերին և ստանդարտներին համաձայն և հանդիսանում են սույն ուղեցույցի մաս:

ա. օպերատիվ Աուդիտը կարող է իրականացվել ինչպես սույն ենթակետով սահմանված հարցաթերթիկների, այնպես էլ լրացուցիչ հարցադրումների միջոցով՝ ելնելով առաջացած պայմաններից:

3) Կազմակերպության ավիացիոն անվտանգության ապահովմանն ուղղված գործառույթների Աուդիտն իրականացվում է Գլխավոր վարչության պետի 2012 թվականի մարտի 22-ի N196-Ա հրամանով հաստատված հարցաթերթիկներով:

11. Տարեկան և սեզոնային Աուդիտներն իրականացվում են Գլխավոր վարչության պետի հրամանով հաստատված տարեկան ծրագրի և ժամանակացույցի համաձայն: Տարեկան ծրագիրը մշակելիս հաշվի են առնվում նախորդ Աուդիտի արդյունքները, ինչպես նաև Ուղեցույցի 8-րդ կետի 2-րդ ենթակետում ներկայացված հաշվետվությունները և տարվա ընթացքում կատարված մոնիտորինգի արդյունքները:

1) Աուդիտի ժամանակացույցն Աերոդրոմ կամ Միջոցներ շահագործողին կամ Ծառայություններին (այսուհետ՝ Կազմակերպություն) ներկայացվում է պլանավորված ուսումնասիրություններից առնվազն 2 օր առաջ:

12. Աուդիտն իրականացվում է Կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ. առանց Կազմակերպության բնականոն գործունեությանը խոչընդոտելու:

13. Տարեկան և սեզոնային Աուդիտներն իրականացվում են տեսական և գործնական ուսումնասիրությունների միջոցով:

1) Տարեկան Աուդիտի տեսական ուսումնասիրությունների շրջանակներում վերանայվում են՝

ա. Աերոդրոմի ձեռնարկը.
բ. Կազմակերպության անվտանգության կառավարման համակարգը.
գ. Աերոդրոմի վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության միջոցառումների ծրագիրը, այդ թվում վթարված օդանավը թռիչքագոտու սահմաններից էվակուացման ծրագիրը:
2) Սեզոնային Աուդիտի տեսական ուսումնասիրությունների շրջանակներում վերանայվում են՝
ա. Աերոդրոմի տարրերից (վազքուղու, ղեկուղու, կառամատույց, անվտանգության գոտիներ) և մնացած գոտիներից ձնահեռացման միջոցառումների ծրագիրը.
բ. սահմանափակ տեսանելիության պայմաններում թռիչքների իրականացման ընթացակարգը և համապատասխան անձնակազմի հետ անցկացված ուսուցումների ծրագիրը.
գ. աերոդրոմի տարածքում շահագործվող տրանսպորտային միջոցների վարորդների թույլտվությունները.
դ. օդանավերը հակասառցակալման հեղուկով մշակելու և անձնակազմի ուսուցումների ծրագիրը:

14. Տարեկան և սեզոնային Աուդիտների գործնական ուսումնասիրությունների շրջանակներում ուսումնասիրվում են Աերոդրոմի շահագործողական համապատասխանությունը Ուղեցույցի 4-րդ կետում նշված փաստաթղթերին:

15. Օպերատիվ Աուդիտներն իրականացվում են գործնական ուսումնասիրությունների միջոցով, բացառությամբ Ուղեցույցի 8-րդ կետի 4-րդ ենթակետում նշված նշանակալի փոփոխությունների իրականացման դեպքերից:
1) Նշանակալի փոփոխությունների իրականացման դեպքերում Խմբի կողմից ուսումնասիրվում են փոփոխությունների անվտանգության համազոր մակարդակի ապահովման գնահատումները, այդ թվում ռիսկերի սահմանումը, որոնք ներկայացվում են Աերոդրոմ շահագործողի կողմից:
16. Կազմակերպությունն ապահովում է ուսումնասիրությունների անցկացման գործընթացը:

ԳԼՈՒԽ I V
ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. Աուդիտի արդյունքները և Խմբի եզրակացությունը հաշվետվության ձևով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Գլխավոր վարչության պետին:

18. Աուդիտի ավարտից հետո, մինչ հաշվետվության մշակումը, Խումբը կարող է վեր հանված թերությունների մասին բանավոր ձևով տեղեկացնի Կազմակերպությանը:

19. Հաշվետվությունում ներառվում են հետևյալ տվյալները՝
1) Աուդիտի անցկացման տարեթիվը:
2) Աուդիտ իրականացնող Խմբի կազմը:
3) Աուդիտի նպատակները:
4) Նախորդ Աուդիտի արդյունքում ի հայտ բերված թերությունների վերացման ուղղությամբ իրականացված գործողությունները:
5) Աուդիտի ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերի ցանկը:
6) Աուդիտի ընթացքում ի հայտ բերված անհամապատասխանությունները և/կամ/ թերությունները (Level 2 findings):
7) Անհամապատասխանությունների և/կամ/ թերությունների առկայության դեպքում ռիսկերի գնահատումը:
8) Իրավիճակի գնահատականը և Խմբի եզրակացությունը:

9) Առաջարկություններ՝ ուղղված հայտնաբերված անհամապատասխանությունների և/կամ/ թերությունների վերացմանը և դրանց ժամկետները:

20. Աուդիտի հաշվետվությունը Գլխավոր վարչության պետի կամ աշխատակազմի ղեկավարի գրությամբ ներկայացվում է Կազմակերպությանը:

1) Գլխավոր վարչությունն ապահովում է տարեկան Աուդիտի հաշվետվության հրապարակումն իր էլեկտրոնային կայքի միջոցով:

21. Հաշվետվությունում անհամապատասխանությունների և/կամ/ թերությունների առկայության դեպքում Կազմակերպությունը մշակում և Գլխավոր վարչություն է ներկայացնում դրանց վերացման միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը:

22. Գլխավոր վարչությունը կարող է իրականացնել ընթացիկ ուսումնասիրություններ Ուղեցույցի 21-րդ կետում նշված միջոցառումների կատարման նկատմամբ կամ իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն. դրանց ավարտից հետո:

23. Աուդիտի ընթացքում թռիչքների անվտանգությանն անմիջականորեն սպառնացող անհամապատասխանությունների և/կամ/ թերությունների (Level 1 findings) ի հայտ գալու դեպքում, մինչ հաշվետվություն ներկայացնելը, դրանց մասին անմիջապես տեղեկացվում է Գլխավոր վարչության պետին և թողարկվում է թռիչքների անվտանգության ուղեցույց՝ համաձայն միջազգային կանոնակարգերով սահմանված պահանջների, որում ընդգրկվում են՝

1) Ի հայտ բերված թերությունները և/կամ/ անհամապատասխանությունները, որոնք սպառնում են թռիչքների անվտանգությանը:

2) Այն համակարգերը և գործընթացները, որոնց վրա ի հայտ բերված անհամապատասխանությունները և/կամ/ թերությունները կարող են բացասական ազդել:

3) Ի հայտ բերված անհամապատասխանությունները և/կամ/ թերությունները վերացնելու համար անհրաժեշտ գործողությունները և դրանց կատարման ժամկետները:

24. Թռիչքների անվտանգության ուղեցույցը հաստատվում է Գլխավոր վարչության պետի հրամանով և ներկայացվում է Կազմակերպությանը: